Ընդունող մարմին՝ Խորհուրդ
Ընդունման ամսաթիվ՝ 11.02.2010թ.
Հաստատող մարմին՝ Խորհրդի նախագահ

Վերանայման ամսաթիվ՝ 24.01.2025թ.
Գործում է՝ 28.06.2025թ.

ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեությունը հիմնված է անդամության սկզբունքի վրա:

1.2 Անդամները կազմում են Կազմակերպության որոշում կայացնող գերագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովը:

1.3 Կազմակերպության անդամ կարող է դառնալ 16 տարին լրացած ցանկացած անձ՝ դիմում-հայտի հիման վրա:

1.4 Կազմակերպության անդամ կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ:

1.5 Կազմակերպության անդամների առնվազն 51 տոկոսը պետք է լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1 Կազմակերպությանն անդամագրվելու համար անհրաժեշտ է լրացնել Կազմակերպության անդամակցության դիմում-հայտ (էլեկտրոնային կամ տպագիր):

2.2 Կազմակերպության անդամ դառնալու մասին որոշումն ընդունում է Կազմակերպության Խորհուրդը՝ թեկնածուի կողմից դիմում-հայտը ներկայացնելուց հետո վեցամսյա ժամկետում:

2.3 Կազմակերպության Խորհուրդը Կազմակերպության անդամակցության մասին որոշումը ընդունում է՝ խորհրդակցելով մարդկային ռեսուրսների պատասխանատուի հետ՝ հիմք ընդունելով թեկնածուի կողմից ներկայացված դիմում-հայտը և դրան նախորդող վեց ամիսների ընթացքում Կազմակերպության գործունեության մեջ ներգրավվածության հիմնավորումները՝ մասնակցած ծրագրեր, միջոցառումներ, նախաձեռնություններ, կամավոր աշխատանք և այլն:

2.4 Կազմակերպության Խորհրդի կողմից անդամակցության մասին որոշումն ընդունելու պահից թեկնածուն համարվում է Կազմակերպության անդամ՝ համապատասխան իրավունքներով ու պարտականություններով:

2.5 Կազմակերպության անդամները ստանում են անդամության քարտ՝ լուսանկարով և չկրկնվող հերթական համարով:

2.6 Դիմումը չբավարարելու պարագայում՝ թեկնածուն կարող է ներկայացնել նոր դիմում-հայտ՝ մերժման պահից առնվազն 3 ամիս անց:

2.7 Կազմակերպության անդամների տվյալադարանի լրացման նպատակով մարդկային ռեսուրսների պատասխանատուն կարող է անդամից պահանջել հավելյալ տեղեկատվություն:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

3.1.1 Մասնակցել Կազմակերպության Ընդհանուր ժողովի նիստերին և անդամների ընթացիկ հանդիպումներին:

3.1.2 Ներկա գտնվել Կազմակերպության Խորհրդի նիստերին:

3.1.3 Ընտրել Կազմակերպության ղեկավարում և վերահսկողություն իրականացնող մարմիններ:

3.1.4 Ընտրվել Կազմակերպության ղեկավարում և վերահսկողություն իրականացնող մարմիններում՝ 21 տարին լրանալուց հետո:

3.1.5 Տեղեկություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին, ծանոթանալ ղեկավարում ու վերահսկողություն իրականացնող մարմինների արձանագրություններին և որոշումներին:

3.1.6 Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով Կազմակերպության ղեկավար մարմիններին ներկայացնել առաջարկություններ և բողոքներ:

3.1.7 Կազմակերպության Խորհրդի որոշմամբ՝ անվճար օգտվել Կազմակերպության կողմից ընձեռնվող հնարավորություններից (օրինակ՝ լեզվի ակումբների անդամավճարներ, միջազգային շարժունակության ծրագրերի մասնակցության վճարներ և այլն):

3.1.8 Կազմակերպության ղեկավար մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոք ներկայացնել Ընդհանուր ժողովին, կամ դատարան՝օրենքով սահմանված կարգով:

3.1.9 Անարգել դուրս գալ Կազմակերպության անդամությունից:

3.1.10 Իրացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

3.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

3.2.1 Հարգել Կազմակերպության առաքելությունը, կանոնադրությունը, կանոնակարգերը, և կառավարման ղեկավար մարմինների որոշումները:

3.2.2 Աջակցել Կազմակերպության գործունեությանը՝ իր հնարավորությունների սահմաններում:

3.2.3 Նպաստել Կազմակերպության զարգացմանն ու հեղինակության բարձրացմանը:

3.2.4 Մասնակցել Կազմակերպության Ընդհանուր ժողովի նիստերին և անդամների ընթացիկ հանդիպումներին, իսկ չմասնակցելու դեպքում՝ նախապես (հանդիպումից առնվազն 3 օր առաջ) տեղեկացնել մարդկային ռեսուրսների պատասխանատուին:

3.2.5 Վճարել անդամավճար՝տարեկան 6.000 (վեց հազար) ՀՀ դրամ: Տարեկան անդամավճարը պետք է վճարվի մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը: Նոր միացած անդամի անդամավճարը հաշվարկվում է՝ Խորհրդի որոշմամբ անդամակցության հաստատման օրվանից մինչև տարեվերջ մնացած լրիվ ամիսների չափով:

3.2.6 Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ և փոխադարձ համաձայնությամբ իր վրա դրված պարտականությունները:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Կազմակերպության անդամը կարող է Կազմակերպության անդամությունից դուրս գալ Կազմակերպության Խորհրդի նախագահին ուղղված գրավոր դիմումի հիման վրա: Կազմակերպության անդամությունից հեռացումը տեղի է ունենում Խորհրդի որոշմամբ: Անդամությունից դուրս գալու դիմումը բավարարվում է դիմումը ներկայացնելուն հաջորդող Խորհրդի նիստի ժամանակ:

4.2 Կազմակերպության անդամը կարող է հեռացվել անդամությունից Կազմակերպության կանոնադրությանն ու նպատակներին հակասող գործողություններ կատարելու և Կազմակերպության հեղինակությանը վնաս պատճառելու համար՝ Կազմակերպության Խորհրդի նախագահի կողմից գրավոր նկատողություն ստանալուց հետո:

4.3 Կազմակերպության անդամը կարող է հեռացվել անդամությունից՝ անդամների ընթացիկ հանդիպումներին և Ընդհանուր ժողովի նիստերին 2 անընդմեջ անհարգելի բացակայության դեպքում:

4.4 Սույն կանոնակարգով սահմանված տարեկան անդամավճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Կազմակերպության անդամը ստանում է գրավոր զգուշացում, որից

հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում չվճարելու դեպքում՝ Խորհրդի առաջիկա նիստին զրկվում է անդամությունից:

4.5 Կազմակերպության անդամությունից հեռացված կամ անդամությունը սեփական դիմումի համաձայն դադարեցրած անդամը վերստին կարող է դիմել Կազմակերպությանն անդամագրվելու համար: Անդամագրումը կատարվում է կրկին ընդհանուր հիմունքներով:

4.6 Կազմակերպության անդամությունից հեռացվելու կամ անդամությունը սեփական դիմումի հիման վրա դադարեցնելու դեպքում՝ վճարված տարեկան անդամավճարը վերադարձման ենթակա չէ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄԻ ՇՆՈՐՀՈՒՄ

5.1 Կազմակերպության Խորհրդի որոշմամբ կարող է շնորհվել պատվավոր անդամի կոչում՝ Կազմակերպության առաքելության իրականացման ընթացքում ցուցաբերած նվիրումի, բացառիկ հանձնառության և շահերի առաջխաղացման համար:

5.2 Պատվավոր անդամի թեկնածու առաջադրվում է Կազմակերպության Խորհրդի անդամի, իսկ հաստատվում է Խորհրդի կողմից:

5.3 Որպես պատվավոր անդամի թեկնածու չի կարող առաջադրվել պարգևատրման պահին Կազմակերպության աշխատակազմի կամ Խորհրդի անդամ հանդիսացող անձը:

5.4 Կազմակերպության պատվավոր անդամը Կազմակերպության անդամին վերապահված իրավունքներ և պարտականություններ չունի:

5.5 Պատվավոր անդամի կոչումը շնորհվում է անժամկետ:

5.6 Պատվավոր անդամի կոչումը կարող է դադարեցվել Խորհրդի որոշմամբ՝ Կազմակերպության առաքելությանը, նպատակներին հակասող գործունեության և Կազմակերպության հեղինակությանը վնաս պատճառելու համար:

5.7 Պատվավոր անդամը կարող է հրաժարվել կոչումից իր հայեցողությամբ:

ԵՆԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐԹՈՒՐ ՆԱՋԱՐՅԱՆ